# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Ինմեդ ՍՊԸ-ն ՉՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/26 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 5 | Զիմեդ (ZIMEDE), Դաբլմեդիկալ (Double Medical) | Զիմեդ (ZIMEDE), Դաբլմեդիկալ (Double Medical) | Զիմեդ (ZIMEDE), Դաբլմեդիկալ (Double Medical) | Զիմեդ (ZIMEDE), Դաբլմեդիկալ (Double Medical) | • Ազդրի պրոքսիմալ հարթակ, արգելափակվող և նորմալ՝ ոչ արգելափակվող, աջ և ձախ վերջույթների համար տարբեր են, սահմանափակ կոնտակտով դինամիկ կոմպրեսսիոն են, պատրաստման նյութը՝ չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք, հարթակի պրոքսիմալ հատվածը լայնացած է, պահանջվող անցքերն են՝ 5, 6, 7, 9, 10, 11, 13 անցք, կոմբինացված և ֆիքսված անցքերով (ըստ պահանջի), համատեղելի է 5,0մմ դիստալ հատվածում և 6,5մմ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | պրոքսիմալ հատվածում սովորական՝ ոչ արգելափակող գլխիկով և արգելափակող գլխիկով պտուտակների համար, քիչ ինվազիվ ստաբիլիզացիոն համակարգի հետ համատեղելի (LISS) և ոչ։ • Ազդրի հարթակ, հարթակը պետք է ունենա ազդրի անատոմիական թեքությունը (anatomical pre-contoured), արգելափակվող և նորմալ՝ ոչ արգելափակվող, աջ և ձախ վերջույթների համար տարբեր են, սահմանափակ կոնտակտով դինամիկ կոմպրեսսիոն են, պատրաստման նյութը՝ չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք, հարթակն ունի ազդրի անատոմիական թեքությունը, պահանջվող անցքերն են՝ 5, 6, 7, 9, 10, 11, 13, 14 անցք, կոմբինացված և ֆիքսված անցքերով (ըստ պահանջի), համատեղելի է 4,5մմ սովորական՝ ոչ արգելափակող գլխիկով, և 5,0մմ արգելափակող գլխիկով պտուտակների համար։ • Ազդրի դիստալ հարթակ, արգելափակվող և նորմալ՝ ոչ արգելափակվող, մեդիալ |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | և դիստալ հատվածներում տեղադրման հնարավորությամբ, աջ և ձախ վերջույթների համար տարբեր են, սահմանափակ կոնտակտով դինամիկ կոմպրեսսիոն են, պատրաստման նյութը` չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք, հարթակի պրոքսիմալ հատվածը լայնացած է, պահանջվող անցքերն են` 5, 6, 7, 9, 10, 11, 13 անցք, կոմբինացված և ֆիքսված անցքերով (ըստ պահանջի), համատեղելի է 5,0մմ դիստալ հատվածում և 6,5մմ պրոքսիմալ հատվածում սովորական` ոչ արգելափակող գլխիկով և արգելափակող գլխիկով պտուտակների համար, քիչ ինվազիվ ստաբիլիզացիոն համակարգի հետ համատեղելի (LISS) և ոչ։ • Ազդրային արգելափակվող ինտրամեդուլյար մեխ, անտերոգրադ տեղադրման հնարավորությամբ (համատեղելի է 12,5մմ շեղբի, 4,9մմ արգելափակող պտուտակի հետ) և ռետռոգրադ տեղադրման հնարավորությամբ (համատեղելի է 12 մմ շեղբի, 4,9մմ, 6,0մմ արգելափակող պտուտակի |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | հետ), պատրաստման նյութը՝ չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք, պահանջվող չափերն են. երկարությունը՝ 240մմ, 260մմ, 280մմ, 300մմ, 320մմ, 340մմ, 360մմ, 380մմ, 400մմ, 420մմ, տրամագիծը՝ 9մմ, 10մմ, 11մմ, 12մմ։<br>• Ոլոքային արգելափակվող ինտրամեդուլյար մեխ, վերծնկոսկրային և ստործնկոսկրային տեղադրման հնարավորությամբ, պրոքսիմալ հատվածում չորս արգելափակման անցքի առկայություն համատեղելի 5,0մմ արգելափակող պտուտակի հետ, բեկորների կոմպրեսիայի հնարավորությամբ, դիստալ հատվածում որս արգելափակման անցքի առկայություն համատեղելի 4,5մմ արգելափակող պտուտակի հետ, արգելափակող պտուտակները արգելափակվում են նաև մեխի պրոքսիմալ հատվածում լրիվ պտուտակով (full threaded), պատրաստման նյութը՝ չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք, պահանջվող չափերն են. երկարությունը՝ 240մմ, 260մմ,280մմ, 300մմ, 320մմ, 340մմ, |

## ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ООО Инмед в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՇՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-21/26 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 5 | | | | | 360մմ, տրամագիծը՝ 8մմ, 9մմ, 10մմ, 11մմ: • Բազկի արգելափակվող ինտրամեդուլյար մեխ, պրոքսիմալ և դիստալ հատվածներում երեքական արգելափակող պտուտակի տեղադրման հնարավորությամբ, պահանջվող երկարություններն են՝ 180մմ, 200մմ, 220մմ, 240մմ, 260մմ, 280մմ, 300մմ, տրամագիծը՝ 7մմ, 7,5մմ, 8մմ, պատրաստման նյութը՝ չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածք. Իմպլանտները պետք է պատրաստված լինեն չժանգոտվող պողպատի և տիտանի համաձուլվածքից, լինեն նոր, չօգտագործված, պետք է մատակարարվեն տեղադրման համար անհրաժեշտ համապատասխան գործիքների (հորատներ, պտուտակային ծորակներ, պտուտակահաններ, սահմանափակող պտտող մոմենտի պտուտակահան հորատման թևքով, ուղղորդող գործիքներ և այլն) հետ միասին: CE MARK կամ FDA որակի վկայականների առկայություն, արտադրողի կողմից տրվող համապատասխանության հավաստագրի (ավտորիզացիոն |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | նամակի) և ծագման սերտիֆիկատի առկայությունը: Յուրաքանչյուր վիրահատության ժամանակ մատակարարը պարտավոր է ապահովել պահանջվող իմպլանտի բոլոր չափերի հասանելիությունը: Պատվիրատուն իր կողմից, նախապես ֆիքսված էլեկտրոնային փոստի միջոցով, ուղարկված գրավոր պահանջում նշում է մատակարարման ենթակա անհրաժեշտ իմպլանտների անվանումը, քանակը, չափը, տեսակը, պատրաստման նյութը: Մատակարարումը պետք է կատարվի 24/7 ռեժիմով՝ առավելագույնը 6 (վեց) ժամվա ընթացքում: Պայմանագրի գործունեության ողջ ժամկետի ընթացքում մատակարարը գնորդին անհատույց պետք է տրամադրի իմպլանտների տեղադրման համար անհրաժեշտ հետևյալ գործիքները. 1. Կաննուլացված օրթոպեդիկ շաղափի հավաքածու, որը պետք է կազմված լինի սնամեջ ցիլինդրիկ ալյումինե կորպուսից, որով հնարավոր է կլինի անցկացնել և պահել Կիշների շյուղեր, շաղափից, |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | 2 (երկու) հատ, նիկել-մետաղահիդրիդային մարտկոցներից (14.4V, 1800mAh), 2 (երկու) հատ, մարտկոցը տեղափոխելու ասեպտիկ օղից, լիցքավորիչից, գայլիկոնի բռնիչի բանալուց, տեղափոխման համար նախատեղված ալյումինե տարրայից, ենթակա լինի ստերիլիզացման (ավտոկլավացման) ≤ 135 °C ջերմաստիճանում: 2. Օրթոպեդիկ օսցիլյացնող օսթեոտոմի հավաքածու, որը պետք է կազմված լինի ալյումինե կորպուսից, որին ամրանում է հատող շեղբը: Հավաքածուն պետք է բաղկացած լինի 4 (չորս) հատ տարբեր չափերի շեղբից, 2 (երկու) հատ նիկել-մետաղահիդրիդային մարտկոցներից (14.4V, 1800mAh), 2 (երկու) հատ մարտկոցը տեղափոխելու ասեպտիկ օղից, լիցքավորիչից, տեղափոխման համար նախատեղված ալյումինե տարրայից, ենթակա լինի ստերիլիզացման (ավտոկլավացման) ≤ 135 °C ջերմաստիճանում: Պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | գնման պահանջ ներկայացնելիս հստակ նշվում է անհրաժեշտ իմպլանտի անվանումը, դրա տեսակը, ձևը, պատրաստման նյութը, չափը, քանակը: Եթե պայմանագրի գործողության ընթացքում Պատվիրատուի կողմից գնման առարկայի պահանջը ներկայացվել է ոչ ամբողջ խմբաքանակի համար, ապա գնման առարկայի չմատակարարված, մնացորդային խմբաքանակի մասով պայմանագիրը լուծվում է: |